

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏՍՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄՍԱՇՆՈՐՀԻ ԶԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան

«_30_»_01_2019 թ.

Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիան, ի դեմս նախագահ Ռադիկ Մարտիրոսյանի (այսուհետ՝ «ՀՀ ԳԱԱ»), որը գործում է ՀՀ ԳԱԱ-ի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա» գիտաարտադրական կենտրոն ՊՈԱԿ-ը, ի դեմս տնօրեն Աշոտ Սաղյանի (այսուհետ՝ Կազմակերպություն), որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ Կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1121 որոշումը (այսուհետ՝ Որոշում), «Հիմնարար և կիրառական հետազոտություններ կենսատեխնոլոգիայի և մանրէաբանության բնագավառներում» ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Պայմանագրով ՀՀ ԳԱԱ-ն պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով Կազմակերպությանը հատկացնել Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեով նախատեսված **299.677.300 (երկու հարյուր ինսուսնիսը միլիոն վեց հարյուր յոթանասուներեք հազար երեք հարյուր)** ՀՀ դրամ գումար, ներառյալ՝ ավելացված արժեքի հարկը (այսուհետ՝ ԱԱՀ), իսկ Կազմակերպությունը պարտավորվում է Ծրագիրն իրականացնել Որոշմամբ և Պայմանագրով սահմանված կարգով:

1.2 Պայմանագրի գնի մասին համաձայնությունը, Ծրագրի առաջադրանքը, օրացուցային պլանը, նախահաշիվը և կատարողների մասին տեղեկությունները ներկայացված են Պայմանագրի հավելվածներում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1 ՀՀ ԳԱԱ-ն իրավունք ունի՝

2.1.1 Կազմակերպությունից պահանջելու կատարել Պայմանագրի **2.4** կետով նախատեսված պարտավորությունները,

2.1.2 ցանկացած ժամանակ ստուգելու Կազմակերպության կողմից իրականացվող Միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը,

2.1.3 չընդունելու իրականացված Միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և Կազմակերպությունից պահանջելու վճարել Պայմանագրի **6-րդ** մասով նախատեսված տուգանքը,

2.1.4 առանց իրականացված Միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

2.1.4.1 Կազմակերպությունը ժամանակին չի սկսում Ծրագրի իրականացումը, կամ Ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

2.1.4.2 Կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է Ծրագրով նախատեսված Միջոցառումների իրականացման ժամկետները (նախատեսված լինելու դեպքում),

2.1.4.3 իրականացված Միջոցառումները չեն համապատասխանում Ծրագրով սահմանված պահանջներին,

2.1.5 Պայմանագիրն օրենքով կամ Պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ Միջոցառումների արդյունքները:

2.2 Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1 ՀՀ ԳԱԱ-ի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները,

2.2.2 Ծրագրի կատարման համար, օրենսդրությամբ սահմանված կարգով, ներգրավելու երրորդ անձանց,

2.2.3 ՀՀ ԳԱԱ-ի գրավոր համաձայնությամբ այլ կազմակերպություններին հանձնել կատարված աշխատանքների արդյունքները:

2.3 ՀՀ ԳԱԱ-ն պարտավոր է՝

2.3.1 Ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել Կազմակերպությանը,

2.3.2 ընդունել համապատասխան որոշում՝ իրականացված Միջոցառումների մասին ներկայացված տարեկան հաշվետվության վերաբերյալ,

2.3.3 ստուգել ու ամփոփել Կազմակերպության կողմից Ծրագրի իրականացման ենթակա գործառույթների գծով ձեռք բերված քանակական ու որակական ցուցանիշների վերաբերյալ տեղեկությունների հիման վրա հաշվարկված գումարի չափի մասին հաշվարկները և իր եզրակացության հետ միասին դրանք ներկայացնել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն՝ վերջինիս կողմից սահմանված կարգով և ժամկետներում:

2.4 Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1 Ծրագիրը կատարել անձամբ,

2.4.2 Ծրագիրը կատարել առաջադրանքին համապատասխան և դրա արդյունքը ՀՀ ԳԱԱ հանձնել սահմանված ժամկետում,

2.4.3 Պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել Ծրագրով և Պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով,

2.4.4 կատարել ՀՀ ԳԱԱ-ի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները,

2.4.5 աշխատանքի ակնկալվող արդյունքի ստացման անհնարիության հայտնաբերման կամ աշխատանքը շարունակելու աննպատակահարմարության մասին եռօրյա ժամկետում տեղեկացնել ՀՀ ԳԱԱ,

2.4.6 ՀՀ ԳԱԱ ներկայացնել հաշվետու ժամանակաշրջանում Պայմանագրի շրջանակներում վճարման գումարի չափի վերաբերյալ հայտ (այսուհետ՝ Հայտ)՝ մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսի 10-ը: Հայտում նշվում է Պայմանագրի շրջանակներում Կազմակերպության կողմից ծրագրի իրականացման ենթակա գործառույթների գծով ձեռք բերված քանակական ու

որակական ցուցանիշների վերաբերյալ տեղեկություններ և դրանց հիման վրա հաշվարկված գումարի չափի մասին մանրամասն հաշվարկներ,

2.4.7 Պայմանագրի նախահաշվում ֆինանսական ցուցանիշներից մինչև 10 տոկոս շեղումների դեպքում ՀՀ ԳԱԱ ներկայացնել հիմնավորում, ապա՝ կնքել համաձայնագիր,

2.4.8 իրականացնել Ծրագրի շրջանակներում ՀՀ ԳԱԱ-ի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության հանրային հատվածի հաշվապահական հաշվառման ստանդարտների դրույթներին համապատասխան հաշվառում,

2.4.9 Ծրագրի ավարտից հետո ՀՀ ԳԱԱ ներկայացնել միջոցառումների իրականացման մասին տարեկան հաշվետվություն՝ դրան կցելով գիտական ծրագրի հաշվետվության հանձնման-ընդունման արձանագրություն,

2.4.10 Պայմանագրի գործողության ընթացքում ապահովել Ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու ՀՀ ԳԱԱ-ի հնարավորությունը,

2.4.11 Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան:

2.4.12 Պայմանագրով նախատեսված միջոցառումների իրականացման արդյունքում առաջացած տնտեսումները/ինսայողությունները վերադարձնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ ոչ ուշ, քան մինչև ընթացիկ տարվա դեկտեմբերի 25-ը:

3 Ծրագրի ֆինանսավորման չափը

Ծրագրի ֆինանսավորման չափը կազմում է **299.677.300 (երկու հարյուր իննսուհինը միլիոն վեց հարյուր յոթանասուկոթ հազար երեք հարյուր)** ՀՀ դրամ, ներառյալ՝ ԱԱՀ:

4 Մոնիթորինգ

4.1 ՀՀ ԳԱԱ-ն ցանկացած ժամանակ կարող է իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով Ծրագրին առնչվող փաստաթղթեր և նյութեր:

4.2 Մոնիթորինգն իրականացվում է ՀՀ ԳԱԱ-ի կամ նրա կողմից լիազորված անձի կողմից:

4.3 Մոնիթորինգի իրականացման ընթացքում Կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

4.4 Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով Կազմակերպությանը տրվում են ցուցումներ և արվում են առաջարկություններ:

5 Վճարման կարգը և ժամկետները

5.1 ՀՀ ԳԱԱ-ն Կազմակերպությանը վճարումները կատարում է Հայտն ընդունելու օրվան հաջորդող 20 աշխատանքային օրվա ընթացքում, եթե Ծրագրով սահմանված չեն վճարումների կատարման այլ կարգ և ժամկետներ:

5.2 ՀՀ ԳԱԱ-ն Պայմանագրի գինը վճարում է Պայմանագրում նշված Կազմակերպության հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով, որն ըստ եռամսյակների բաշխվում է հետևյալ կերպ. բյուջետային տարվա 1-ին եռամսյակում՝ 20 տոկոս, 2-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 3-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 4-րդ եռամսյակում՝ 30 տոկոս:

6 Կողմերի պատասխանատվությունը

Պայմանագրով և Ծրագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Կազմակերպությունը պարտավորվում է փոխհատուցել չիրականացված Միջոցառման չափով և վճարել տուգանք՝ չիրականացված Միջոցառման համար նախատեսված գումարի 1 տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքի վճարումը Կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից: ՀՀ ԳԱԱ-ն սույն կետով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է Կազմակերպությանը վճարվելիք գումարներից:

7 Պայմանագրի գործողության ժամկետը

Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի ստանձնած պարտավորությունների՝ ամբողջ ծավալով կատարումը:

8 Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու Պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9 Եզրափակիչ դրույթներ

9.1 Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են Կողմերի կողմից:

9.2 Պայմանագիրը կնքվում է երկու օրինակով, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է Պայմանագրի մեկ օրինակ: Պայմանագրի անբաժանելի մասն է Կազմակերպության կողմից Կոմիտե ներկայացված Ծրագրի հայտը:

9.3 Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև Պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

10 Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա

ք. Երևան, Մարշալ Բաղրամյան պող., 24

Հ/հ 900011024115
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա»
գիտաարտադրական կենտրոն ՊՈԱԿ
ք. Երևան, Գյուրջյան 14

ք. Երևանի թիվ 1 ՏԳԲ
Հ/հ 900018005729
ՀՎՀՀ 00871944

Նախագահ՝


(ստորագրություն)

ՈՍԻՄ ԱՄՐՑԻՆԱՅԱՆ



Տնօրեն՝


(ստորագրություն)

ԱՇԽ ՍԱՂՅԱՆ

Կ. Տ.



Ծրագրի գիտական ղեկավար՝



ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Ա. Սաղյան

Հավելված 1
«30» 01 2019 թ.
N Դ-32 պայմանագրի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՆԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ

«Հիմնարար և կիրառական հետազոտություններ կենսատեխնոլոգիայի և մանրէաբանության
բնագավառներում» ծրագրի

Մենք՝ ներքոստորագրյալներս, ՀՀ ԳԱԱ-ի Նախագահ Ռադիկ Մարտիրոսյանը և
Կազմակերպության տնօրեն Աշոտ Սաղյանը, վկայում ենք, որ Կողմերը համաձայնություն են ձեռք
բերել «30» 01 2019 թ. N Դ-32 պայմանագրով աշխատանքի գնի
վերաբերյալ՝ 299.677.300 (երկու հարյուր իննսուհինը միլիոն վեց հարյուր յոթանասուներեք հազար
երեք հարյուր) ՀՀ դրամ գումարի չափով, ներառյալ՝ ԱԱՀ:

Սույն արձանագրությունը հիմք է Կողմերի միջև փոխադարձ հաշվարկների և վճարումների
համար:

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա

Նախագահը



ՌԱԴԻԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա»
գիտաարտադրական կենտրոն ՊՈՍԿ

Տնօրեն



ԱՆՈՏ ՍԱՂՅԱՆ

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

«Հիմնարար և կիրառական հետազոտություններ կենսատեխնոլոգիայի և մանրէաբանության բնագավառներում» ծրագրի

1. Աշխատանքի կատարման հիմքը՝ Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջե:

2. Աշխատանքի նպատակը:

Ծրագրի հիմքում ընկած է Կենտրոնի ստորաբաժանումների բազմալյա գիտահետազոտական գործունեությունը, որն ուղղորդված է արդի կենսատեխնոլոգիական խնդիրների լուծմանը հետևյալ ոլորտներում՝ կենսադեղագործություն, կենսաբժշկագիտություն, արդյունաբերական կենսատեխնոլոգիա, կենսաէներգետիկա, գյուղատնտեսական և սննդային կենսատեխնոլոգիա, բնապահպանական (էկոլոգիական) կենսատեխնոլոգիա և այլն:

Կենտրոնի զարգացման գերակա նպատակն է կայուն և մրցունակ գիտական, գիտաարտադրական ու տեխնոլոգիական բազայի ձևավորումը՝ կենսատեխնոլոգիայի ոլորտի գիտահետազոտական կազմակերպություններին ներկայացվող միջազգային ամենաբարձր չափանիշներին համապատասխան:

3. Աշխատանքին ներկայացվող հիմնական պահանջները:

Կենտրոնի կողմից կատարվող գիտահետազոտական աշխատանքները պետք է վերաբերեն հիմնականում կենսատեխնոլոգիայի և մանրէաբանության բնագավառներին: Դրանք պետք է ունենան ինչպես հիմնարար հետազոտությունների բաղադրիչ, այնպես էլ՝ կիրառական:

Հիմնարար բնույթի աշխատանքները պետք է ունենան հնարավորինս բարձր որակ, ինչի ապացույցը պետք է հանդիսանա կատարված աշխատանքների տպագրությունը տեղական և արտերկրի բարձր վարկանիշ ունեցող գիտական ամսագրերում:

Կիրառական բնույթի աշխատանքներն անհրաժեշտաբար պետք է ներկայացվեն արտոնագրման՝ նկատի ունենալով դրանց հետագա առևտրայնացումը:

Սույն ծրագրի բնույթից ելնելով՝ պետք է կարևորել կազմակերպության կազմում գործող Մանրէների ավանդադրման կենտրոնի բացառիկ նշանակությունը՝ որպես մանրէների հավաքածուի պահպանման, հարստացման և զարգացման երաշխավոր: Նշված խնդիրների լուծման համար ծրագրավորված են մանրէաբանների հետ համատեղ հետազոտություններ, որոնք ներառում են օգտակար նյութերի նոր արտադրիչների որոնումը, հայտնաբերումը, մեկուսացումը և ուսումնասիրությունը: Նախատեսվում է ՀՀ արտադրական կազմակերպությունների հետ գիտաարտադրական համագործակցության զարգացումը, գիտահետազոտական արդյունքների իրականացման համար փորձատեղակայանքների մշակումը և ստեղծումը:

4. Աշխատանքի բովանդակությունը:

Ծրագրի ռազմավարական նպատակն է Հայաստանում կենսատեխնոլոգիայի բնագավառում, այդ թվում կենսաբժշկության առանձին ուղղությունների, ագրոկենսատեխնոլոգիաների, արդյունաբերական կենսատեխնոլոգիայի և կենսաէներգետիկայի բնագավառներում ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա» ԳԱԿ-ի առաջատար դիրքերի աստիճանաբար ամրապնդումը և կենսատեխնոլոգիայի գլոբալ մրցունակ ոլորտի ստեղծումը: Առաջարկվող ծրագրի հիմնական խնդիրներն են.

- կենսատեխնոլոգիայի զարգացման ենթակառուցվածքի կատարելագործումը,

- կենսատեխնոլոգիայի բնագավառում առաջնային ծրագրերի ձևակերպումը և իրականացումը,
- Հայաստանում կենսատեխնոլոգիայի բոլոր ուղղություններով կենսաարդյունաբերության լայնածավալ զարգացումը,
- աջակցությունը կյանքի մասին գիտության և ֆիզիկաքիմիական կենսաբանության զարգացմանը,
- կենսատեխնոլոգիայի բնագավառում ժամանակակից կրթական ծրագրերի և կադրերի պատրաստման համակարգի ստեղծումը,
- կենսաարդյունաբերության հիմք հանդիսացող կենսատեսուրսային պոտենցիալի պահպանումը և զարգացումը,
- կենսատեխնոլոգիայի մեթոդներով և միջոցներով երկրի սոցիալ-տնտեսական, էներգետիկ, բնապահպանական և այլ արդի խնդիրների լուծումը,
- հայրենական կենսատեխնոլոգիայի ներգրավումը համաշխարհային կենսաէկոնոմիկայում,
- կենսատեխնոլոգիայի զարգացման համար իրավական, տնտեսական, ինֆորմացիոն և կազմակերպական հիմքերի կատարելագործումը:

Հիմք ընդունելով գիտության զարգացման վերաբերյալ ՀՀ կառավարության ներկայացրած ծրագրի դրույթները, որտեղ առաջնությունը տրվում է կիրառական ուղղվածություն ունեցող հիմնարար հետազոտություններին, ինչպես նաև ՀՀ ԳԱԱ նախագահության կողմից ընդունված «Գիտական կազմակերպությունների գործունեության արդյունավետության գնահատման» ծրագրի հիմնական դրույթները՝ Կենտրոնի ղեկավարությունը խնդիր է դրել Կենտրոնի կառուցվածքում պարբերաբար կատարել փոփոխություններ և գոյություն ունեցող գիտական լաբորատորիաները վերակազմավորել ըստ հեռանկարային ուղղությունների, իսկ դրանց հիմնարար հետազոտություններն ուղղորդել դեպի փոքր արտադրություններ:

Համաձայն 2017թ.-ին իրականացված կառուցվածքային փոփոխությունների և ելնելով նոր ձևավորված գիտական ստորաբաժանումների առջև դրված նպատակներից և խնդիրներից, Կենտրոնի գիտահետազոտական և գիտաարտադրական գործունեության 2019թ.-ի ծրագիրը ներառում է ինչպես հիմնարար, այնպես էլ կիրառական հետազոտություններ:

Կարևոր է նշել, որ հիմնարար հետազոտություններն առաջին անգամ ուղղված կլինեն բացառապես պատրաստի և բազմակողմանի հետազոտված կենսատեխնոլոգիական արտադրանքի ստացմանը:

Այսպես, հիմնարար հետազոտությունների շարքին է դասվում հետևյալ նպատակների և խնդիրների իրականացումը.

1 (ա). *Pectobacterium carotovorum*-ի տարբեր տեսակների շտամներից ասպարտատ և արոմատիկ ամինատրանսֆերազների գեների կլոնավորում և ռեկոմբինանտ ֆերմենտների համեմատական բնութագրում (ղեկ.՝ կ.գ.թ. Ա.Համբարձումյան)

Նպատակն է *P.carotovorum*-ի տարբեր տեսակներից ասպարտատ և արոմատիկ ամինատրանսֆերազների գեների կլոնավորումը *E.coli*-ի բջիջներում, ֆերմենտների շտամ-արտադրիչների ստացումը, ֆերմենտների անջատումը, մաքրումն ու բնութագրումը, մասնավորապես.

- մոդուլային կլոնավորման pETGG_CD-LacZ պլազմիդին հարմարեցված ռեստրիկցիոն սայտերով *P.carotovorum*-ի ArAT_8134484 և AsAT_8132725 ամինատրանսֆերազային գեների էքսպրեսային կլոնավորման համար նախատեսված պրայմերային զույգերի նախագծում,
- «Մանրէների ավանդադրման կենտրոն» (ՄԱԿ) հիմնարկից ստացված *P.carotovorum*-ի տարբեր տեսակներից ասպարտատ և արոմատիկ ամինատրանսֆերազների գեների ամպլիֆիկացում՝ նշված պրայմերների կիրառմամբ և կլոնավորում *E.coli*-ի բջիջներում,
- *P.carotovorum*-ի տարբեր տեսակների ռեկոմբինանտ ասպարտատ և արոմատիկ ամինատրանսֆերազների անջատում և մաքրում,

- *P.carotovorum*-ի տարբեր տեսակների ռեկոմբինանտ ասպարտատ և արոմատիկ ամինատրանսֆերազների համեմատական բնութագրում:

1 (բ). *Geobacillus stearothermophilus* և *Thermotoga neapolitana* մանրէների *argJ* գենների հիման վրա L-արգինինի նոր շտամ-արտադրիչների ստացում (ղեկ.՝ կ.գ.թ. Ա.Համբարձումյան)

Նպատակն է թերմոֆիլ *G.stearothermophilus* և *T.neapolitana* բակտերիաների բիֆունկցիոնալ օրնիթինացետիլ տրանսֆերազը կողմնորոգ հետերոլոգ *argJ* գենների մոլեկուլային կլոնավորումը *E.coli*-ի բջիջներում, ինչպես նաև ստացված ռեկոմբինանտ պլազմիդների կառուցվածքային վերլուծությունը, դրանց հիման վրա նոր շտամ-արտադրիչների ստեղծումը: Խնդիրը իրականացնելու համար նախատեսված է.

- *G.stearothermophilus* և *T.neapolitana* թերմոֆիլ մանրէների *argJ* գենների ամպլիֆիկացիա պոլիմերազային շղթայական ռեակցիայի (ՊՇՌ) մեթոդով՝ համապատասխան պրայմերների օգնությամբ,
- ամպլիֆիկացիայի ենթարկված *G.stearothermophilus* և *T.neapolitana* թերմոֆիլ մանրէների *argJ* գենների մոլեկուլային կլոնավորում pACYC184 (4,2հզ) վեկտորի վրա,
- *argJ* գենների առկայությունը ստացված ռեկոմբինանտ պլազմիդների վրա ստուգելու նպատակով այդ պլազմիդներով *E.coli* XA4 (*argA*-) և *E.coli* XS1D2R (*argE*-) բջիջների տրանսֆորմացիա,
- ստացված տրանսֆորմանտներից ռեկոմբինանտ պլազմիդների անջատում և դրանց կառուցվածքային վերլուծություն,
- *E.coli* HK ռեկոմբինանտ շտամի կառուցում *G.stearothermophilus* և *T.neapolitana* մանրէների հետերոլոգ *argJ* գենների միջոցով:

2 (ա). Մետաղապրոտեին ազների նոր արգելակիչների և արգելակման մեխանիզմների բացահայտում (ղեկ.՝ կ.գ.թ. Ն.Հովհաննիսյան)

Հետազոտությունների նպատակներն են.

- կատարել MM2 մետաղապրոտեազների և սինթետիկ միացությունների փոխազդեցության վերլուծություն Docking-ի միջոցով,
- ուսումնասիրել ոչ սպիտակուցային ամինաթթուների ազդեցությունը MM2 մետաղապրոտեազի ակտիվության վրա,
- ուսումնասիրել ոչ սպիտակուցային ամինաթթուներ պարունակող պեպտիդների ազդեցությունը MM2 մետաղապրոտեազի ակտիվության վրա:

2 (բ). Հակաբիոտիկների նկատմամբ մանրէների կայունության ուսումնասիրում (ղեկ.՝ կ.գ.թ. Ն.Հովհաննիսյան)

Հետազոտությունների նպատակներն են.

- ընտրել ՄԱԿ-ում պահպանվող մանրէներից բարձր կենսաքայքայող ակտիվություն ցուցաբերող շտամներ,
- բացահայտել հակաբիոտիկակայուն գենների ներդրումը (տարածումը) ՄԱԿ-ում պահպանվող մանրէների շտամներում:

3. Բարձր ակտիվությամբ որոշ հալենային դեղապատրաստուկների արտադրական տեխնոլոգիաների մշակում, նմուշների ստացում և սերտիֆիկացում (ղեկ.՝ ք.գ.դ. Ս.Դադայան)

Նպատակն է մի շարք հալենային պատրաստուկների ստացման տեխնոլոգիայի մշակումը՝ հետազայում դրանց սերիական արտադրության կազմակերպման համար:

- Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի դեղաբույսերի հումքային բազայի գնահատումը և բնորոշում, այդ թվում՝ Առյուծագիի (*Leonúrus*), Սպունդուկի (*Pyrola* L.), Կապարի (*Capparis spinosa* L.), Ալոճենու (*Crataégus*), Բոխու, Արևքուրիկի (*Hypericum*) և այլն,

- բուսական հումքի ֆիտոքիմիական ուսումնասիրության և առկա կենսաբանորեն ակտիվ միացությունների որակական և քանակական գնահատման իրականացում և դրանց հենքի վրա ֆիտոպատրաստուկների օպտիմալ դեղաձևերի ստեղծում,
- մշակված լաբորատոր տեխնոլոգիական սխեմաների ներդրում «Հայկենսատեխնոլոգիա» ԳԱԿ-ի «Հալենային դեղապատրաստուկների» արտադրամասում:

4. Օպտիկապես ակտիվ ոչ սպիտակուցային ամինաթթուների և դրանց հենքի վրա դի- և տրիպեպտիդների սինթեզ (դեկ.՝ ք.գ.թ. Ա. Մկրտչյան)

Հետազոտությունների նպատակն է մշակել կողքային շղթայում *բիս*-ացետիլենային կամբջակներ պարունակող էնանտիոմերապես հարստացված նոր ոչ սպիտակուցային ամինաթթուների և նրանցից կազմված դի- և տրիպեպտիդների սինթեզի արդյունավետ մոթոդներ: Դրա համար նախատեսվում է օգտագործել կատարող խմբի կողմից նախկինում մշակված ամինաթթուների ասիմետրիկ սինթեզի մեթոդաբանությունը [4-10], հիմնված Ni^{II} իոնի հարթ-քառակուսային ամինաթթվային կոմպլեքսների ունիկալ հատկությունների վրա: Նպատակին հասնելու համար նախատեսված է.

- որպես ակտիվ ելային սինտոններ սինթեզել Ni^{II} իոնի ամինաթթվային կոմպլեքսներ, ամինաթթվային մնացորդի կողքային ռադիկալում չհագեցած ացետիլենային և տեղակալված բենզիլային մնացորդների պարունակությամբ,
- հետազոտել և իրականացնել կոմպլեքսների ամինաթթվային մնացորդի ացետիլենային խմբի sp-ածխածնի ատոմին արիլալկիլների Գլազերի համակցման ռեակցիաները,
- մշակել Ո-դիրքում համակցված *բիս*-ացետիլենային խմբեր պարունակող արոմատիկ օղակում տեղակալված էնանտիոմերապես մաքուր (S)-Ո-ֆենիլալանինների սինթեզի արդյունավետ մեթոդներ,
- սպեկտրադիտական մեթոդներով (¹H- և ¹³C-ՄՄՌ, HPLC, էլեմենտային անալիզ) հետազոտել և բացահայտել սինթեզված նոր ոչ սպիտակուցային ամինաթթուների կառուցվածքն ու բացարձակ կոնֆիգուրացիան,
- նոր ամինաթթուների հենքի վրա սինթեզել դի- և տրիպեպտիդներ՝ COOH խմբի ակտիվացման համար ակտիվացած էսթերների և NH₂ խմբի պաշտպանման համար BOC և Fmoc մեթոդների կիրառմամբ, հետազոտել ու պարզաբանել սինթեզված նոր պեպտիդների կառուցվածքը:

5. Ֆունկցիոնալ սննդի ստեղծման նպատակով մարդու և կենդանիների կաթից մեկուսացված կաթնաթթվային բակտերիաների ֆիզիոլոգիական և տեխնոլոգիական հատկությունների ուսումնասիրում (դեկ.՝ կ.գ.թ. Կ.Զիտչյան)

Նպատակը Հայաստանի և Արցախի տարբեր ընտանի կենդանիներից մեկուսացված կաթնաթթվային բակտերիաների (ԿԹԲ) կիրառմամբ ֆունկցիոնալ սննդի ստացման տեխնոլոգիայի մշակումն է: Այդ նպատակով լուծել նախատեսված է.

- ընտրված ԿԹԲ-ների պրոբիոտիկ և կենսաքիմիական հատկությունների ուսումնասիրում,
- ընտրված ԿԹԲ-ների շտամների հիման վրա տեխնոլոգիական պարամետրերի մշակում և ստացված պատրաստուկների օրգանոլեպտիկ հատկությունների ուսումնասիրում՝ ֆունկցիոնալ սննդի ստացման համար,
- ընտրված ԿԹԲ-ների շտամների հիման վրա մասնակի մաքրված հակամանրէային պատրաստուկների ստացում՝ սննդի մանրէային փչացումը կանխելու համար,
- ընտրված ակտիվ շտամների կիրառմամբ կենսապատրաստուկների ստացման լաբորատոր կանոնակարգերի (ռեգլամենտների) մշակում:

6. Բուսական և կենդանական հումքի թափոններից ջրալույծ մելանինների անջատման, մաքրման եղանակների մշակում և ֆիզիկաքիմիական հատկությունների ուսումնասիրում (դեկ.՝ ք.գ.թ. Ա.Ծատուրյան)

Նպատակն է ուսումնասիրել և օպտիմալացնել ֆիզիկաքիմիական պրոցեսները, որոնք ընկած են բուսական և կենդանական հումքի թափոններից ջրալույծ մելանինների անջատման տեխնոլոգիայի հիմքում, մասնավորապես՝ մշակել արտադրական թափոններից ջրալույծ ալլո- (բուսական ծագման) և էու- (կենդանական ծագման) մելանինների և սպիտակուցային ամինաթթուների անջատման արդյունավետ քիչ թափոնային եղանակներ: Նախատեսված է.

- որոշել բուսական և կենդանական թափոնների թթվային և հիմնային հիդրոլիզի իրականացման օպտիմալ ցուցանիշները,
- մշակել բնական հումքից անջատված մելանինները ուղեկցող խառնուրդներից մաքրման օպտիմալ եղանակները,
- ուսումնասիրել ջրում անլուծելի մելանինները ջրալույծ ձևի փոխարկման հնարավորությունը,
- ուսումնասիրել անջատված ալլոմելանինի կենսաբանական հատկությունները, որոնք, ի տարբերություն էումելանինի, գրեթե ուսումնասիրված չեն,
- ուսումնասիրել ստացված մելանինների որոշ ֆիզիկաքիմիական հատկությունները,
- մշակել կենդանական հումքի հիդրոլիզատից ամինաթթուների խառնուրդի անջատման և մաքրման արդյունավետ եղանակ,
- ուսումնասիրել ստացված կենսաբանորեն ակտիվ միացությունների կիրառման հնարավորությունը տնտեսության տարբեր ոլորտներում:

7. L-հիստիդինի, բակտոռենինի և նոր կենսապարարտանյութի ստացման արդյունավետ տեխնոլոգիաների մշակում (ղեկ.՝ կ.գ.թ. Վ. Ղոչիկյան)

ա. Ներկայացվող առաջարկի նպատակն է մշակել աղակալած հողերի դեմ պայքարի արդյունավետ եղանակ: Նպատակին հասնելու համար նախատեսված է.

- աղակալած հողերից մեկուսացված ազոտ ֆիքսող մանրէների կուլտուրալ, մորֆոլոգիական և ֆիզիոլոգիական հատկությունների ուսումնասիրում,
- մեկուսացված մանրէների ազոտ ֆիքսելու ակտիվության համեմատական բնութագրում,
- ընտրված շտամների կուլտիվացման համար սննդամիջավայրերի ընտրություն և օպտիմալացում,
- ընտրված շտամների կուլտիվացման ցուցանիշների ընտրություն և օպտիմալացում լաբորատոր պայմաններում:

բ. L-հիստիդինի մանրէաբանական ստացման տեխնոլոգիայի ուսումնասիրում լաբորատոր կենսաառեակտորում՝ կիրառելով (S)-β-[4-ֆենիլ-β-3-(3'-հիդրօքսիպրոպիլ)-5-թիօքսի-1,2,4-թիազոլ-1-իլ]-α-ալանինին ոչ սպիտակուցային ամինաթթվի նկատմամբ կայուն նոր ստացված բարձրակտիվ *B.flavum* LGS6 շտամ-արտադրիչի կիրառմամբ: Տեխնոլոգիական ցուցանիշների օպտիմալացում և կատարելագործում, որը կապահովի նպատակային նյութի առավելագույն ակտիվությունը և ուղեկցող ամինաթթուների սինթեզի ցածր մակարդակը: Մշակված տեխնոլոգիայի կատարելագործմանը, ինքնարժեքի իջեցմանը և արտադրողականության բարձրացման ուղղված հետազոտությունները հնարավորություն կտան մրցունակ դարձնելու մշակված տեխնոլոգիան միջազգային շուկայում: Նախատեսված է.

- ստացված շտամ-արտադրիչի ֆիզիոլոգիական և կենսաքիմիական առանձնահատկությունների ուսումնասիրություն լաբորատոր կենսաառեակտորում,
- L-հիստիդինի ստացման համար ցանքսանյութի և ֆերմենտացիայի միջավայրի կազմի մշակում և օպտիմալացում լաբորատոր կենսաառեակտորում՝ նպատակային նյութի առավելագույն ակտիվության և ուղեկցող ամինաթթուների սինթեզի ցածր մակարդակի ապահովման համար,
- ֆերմենտացիայի տեխնոլոգիական ցուցանիշների օպտիմալացում և կատարելագործում լաբորատոր կենսաառեակտորում՝ նպատակային նյութի առավելագույն ակտիվության և ուղեկցող ամինաթթուների նվազագույն սինթեզի ապահովման նպատակով:

գ. Հետազոտության նպատակն է բարելավել մակարդող մանրէային պատրաստուկի ստացման տեխնոլոգիան, նրա հատկությունները ռենինի հատկություններին մոտեցնելու նպատակով: Նախատեսված է.

- բարձր արտադրողականությամբ մանրէ- արտադրիչի ընտրություն,
- մանրէ-արտադրիչի կուլտիվացման միջավայրի կազմի օպտիմալացում,
- կուլտիվացման ջերմաստիճանի և տևողության օպտիմալացում,
- մակարդող մանրէային պատրաստուկի մաքրման, խտացման և չորացման մեթոդների մշակում:

8. Ազոտֆիքսող մանրէների աղակայուն, հեռանկարային շտամների ընտրություն և ուսումնասիրում (ղեկ.՝ կ.գ.թ. Վ.Հակոբյան)

Աշխատանքի նպատակն է իրականացնել ազոտֆիքսող սիմբիոտիկ և ազատ ապրող մանրէների հետազոտություն՝ աղուտները վերականգնող և վարելահողերի էրոզիան կանխարգելող կենսապարարտանյութերի մշակման համար: Նախատեսված է.

- ուսումնասիրել «Rhizomix» կենսապարարտանյութի մանրէների կենսունակությունը աղային սթրեսի պայմաններում,
- Հայաստանի վայրի թիթեռնածաղկավոր բույսերից և Արցախի հողերից մեկուսացված պալարաբակտերիաների նոր շտամների մորֆո-ֆիզիոլոգիական հատկանիշների ուսումնասիրում,
- շարունակել ազոտֆիքսող մանրէներից բաղկացած «Rhizomix» կենսապարարտանյութի կազմի լրամշակման հարցերի ուսումնասիրումը լաբորատոր փորձարկումների ճանապարհով,
- օգտագործելով վարակման նոր տեխնոլոգիա հիմնված «Rhizomix» կենսապարարտանյութի մանրէների (*Rhizobium*, *Azotobacter chroococcum*, *Paenibacillus polymyxa*) կիրառման վրա ուսումնասիրել սիսեռի, ոսպի, չամանի եկամտաբերությունը Գեղարքունիքի մարզում դաշտային փորձի եղանակով,
- իրականացնել պալարաբակտերիաների տարբեր տեսակներից բաղկացած հավաքածուի պահպանում և համալրում:

9. Արդյունավետ մանրէային կոնսորցիումների ստացում, մշակում և կիրառում հանքային հումքից պղնձի և այլ արժեքավոր մետաղների կենսակորզման գործընթացում (ղեկ.՝ կ.գ.դ. Ն.Վարդանյան)

Հետազոտության նպատակը ՔԲ կենսաբազմազանության և նրանց գործունեությամբ պայմանավորված գործընթացների ուսումնասիրությունն է, ինչպես նաև դրանց արդյունավետ կիրառումը գունավոր, և այլ արժեքավոր մետաղների կենսակորզման գործընթացներում: Նախատեսված է.

- ուսումնասիրել Հայաստանի և Արցախի հանքավայրերի տարբեր էկոհամակարգերում ՔԲ կոնսորցիումների տեսակային կազմի յուրահատկությունները,
- իրականացնել սուլֆիդային ապարների տարրալուծման բարձր ակտիվությամբ օժտված ՔԲ կոնսորցիումների սկրինինգ,
- ուսումնասիրել մեկուսացված ՔԲ առանձին տեսակների ֆիզիոլոգիական, կենսաքիմիական առանձնահատկությունները, ապարների մակերևույթին ադիեզիայի և կենսատարրալուծման ունակությունները,
- մշակել ՔԲ կայուն և բարձրարդյունավետ համակցություններ՝ հանքային հումքից պղնձի և այլ արժեքավոր մետաղների կենսակորզման նպատակով,

- ստացված արդյունքների հիման վրա մշակել ադապտացված տեխնոլոգիական մոտեցումներ կոնկրետ որոշակի հանքավայրերում պղնձի և այլ արժեքավոր մետաղների ստացման արդյունավետ կենսահիդրոմետալուրգիական գործընթացներում կիրառելու նպատակով:

10. Ֆոտոսինթեզող մանրէների կենսաբանական առանձնահատկությունների և դրանց կիրառման հեռանկարների ուսումնասիրում (ղեկ.՝ ան.գ.թ. Վ. Գոզինյան)

Աշխատանքի նպատակն է ուսումնասիրել *Chlorella vulgaris*, *Coelastrella terrestris*, *Dunaliella sp.*, *Neochloris oleoabundans*, *Parachlorella kessleri* և *Spirulina maxima* տեսակի միկրոօրգանիզմների կենսազանգվածի արդյունավետ կուտակման խնդիրները, ինչպես նաև շարունակել 5-ԱԼԹ-ի արտադրիչ հանդիսացող ծիրանագույն ոչ ծծմբային ֆոտոսինթեզող բակտերիաների հետազոտությունը: Նախատեսված է.

- ուսումնասիրել և բացահայտել միկրոօրգանիզմների կուլտիվացման օպտիմալ ռեժիմները գարեջրի արտադրության թափոնների վրա և ավանդական սննդամիջավայրերում կենսազանգվածի առավելագույն հնարավոր կուտակում ապահովելու նպատակով,
- համապատասխան մեթոդների կիրառմամբ իրականացնել միկրոօրգանիզմների կենսազանգվածի նախնական վերամշակում՝ տարբեր կենսաբանական արտադրանքների հետագա ստացման նպատակով,
- կատարել միկրոօրգանիզմների կենսազանգվածի կենսաօրգանական բաղադրիչների համեմատական վերլուծություն (չոր քաշ, ճարպերի, սպիտակուցների, ածխաջրերի ընդհանուր պարունակություն և այլն),
- որոշել և բնութագրել միկրոօրգանիզմների սպիտակուցների ամինաթթվային կազմը,
- առաջարկել միկրոօրգանիզմների առավել արդյունավետ կուլտուրաներ՝ հետագայում արտադրության մեջ ներդնելու նպատակով,
- կատարելագործել 5-ամինալևուլինաթթվի սինթեզը *Rhodobacter azotoformans* և *Rba.sphaeroides* կուլտուրաների և նրանց կայուն մուտանտների կիրառմամբ:

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա

Նախագահ՝

(ստորագրություն)

ՌԱԴԻԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա»
գիտաարտադրական կենտրոն ՊՈԱԿ

Տնօրեն՝



ԱՇՈՏ ՄԱՐՅԱՆ

Ծրագրի գիտական ղեկավար՝

(ստորագրություն)

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Ա. Սադյան

ՕՐԱՅՈՒՑԱՅԻՆ ՊԼԱՆ *

«Հիմնարար և կիրառական հետազոտություններ կենսատեխնոլոգիայի և մանրէաբանության բնագավառներում» ծրագրի

h/h	Իրականացվելիք միջոցառման					
	անվանումը	համառոտ բովանդակությունը	կատարման ենթակա գործառույթների նկարագիրը	ակնկալվող արդյունքները	կատարման ժամկետները	պահանջվող գումարը (հազ. դրամ)
1	ա). <i>Pectobacterium carotovorum</i> -ի տարբեր տեսակների շտամներից ասպարտատ և արոմատիկ ամինատրանսֆերազների գեների կլոնավորում և ռեկոմբինանտ ֆերմենտների համեմատական բնութագրում (ղեկ.՝ կ.գ.թ. Ա.Համբարձումյան)	Նպատակն է <i>P.carotovorum</i> -ի տարբեր տեսակներից ասպարտատ և արոմատիկ ամինատրանսֆերազների գեների կլոնավորումը <i>E.coli</i> -ի բջիջներում, ֆերմենտների շտամ-արտադրիչների ստացումը, ֆերմենտների անջատումը, մաքրումն ու բնութագրումը	<ul style="list-style-type: none"> - <i>G.stearothermophilus</i> և <i>T.neapolitana</i> թերմոֆիլ մանրէների <i>argJ</i> գեների ամպլիֆիկացիա ՊՇՌ մեթոդով՝ համապատասխան պրայմերների օգնությամբ, - ամպլիֆիկացիայի ենթարկված <i>G.stearothermophilus</i> և <i>T.neapolitana</i> թերմոֆիլ մանրէների <i>argJ</i> գեների մոլեկուլային կլոնավորում pACYC184 (4,2հզ) վեկտորի վրա, - <i>argJ</i> գեների առկայությունը ստացված ռեկոմբինանտ պլազմիդների վրա ստուգելու նպատակով այդ պլազմիդներով <i>E.coli</i> XA4 (<i>argA</i>⁻) և <i>E.coli</i> XS1D2R (<i>argE</i>⁻) բջիջների տրանսֆորմացիա, - ստացված տրանսֆորմանտներից ռեկոմբինանտ պլազմիդների անջատում և դրանց կառուցվածքային վերլուծություն, - <i>E.coli</i> HK ռեկոմբինանտ շտամի կառուցում <i>G.tearothermophilus</i> և <i>T.neapolitana</i> մանրէների հետերոլոգ <i>argJ</i> գեների միջոցով: 	Տեխնոլոգիական արժեք ունեցող նոր ռեկոմբինանտ ասպարտատ և արոմատիկ ամինատրանսֆերազների շտամ-արտադրիչների և համապատասխան ֆերմենտների ստացումն ու բնութագրումը:	I, II, III, IV	17837,9
